բանման պէտք է տիրի ոչ միայն Սիւրիային, այլ եւ ամբողջ Կիլիկիային մինչեւ Տաւրոս, շատ ազդեցիկ մարդիկ, նրանց ներկայացրած հիմնաւորումների ազդեցութեան տակ, իբր թէ, կամաց-կամաց հակում են ինքնավար Հայաստանի մտքին, Ռուսաստանի, Ֆրանսայի եւ Անգլիայի երբեակ հովանաւորութեան տակ, մէջը առնելով եւ Կիլիկիան Ատանա եւ Մերսին քաղաքներով, բայց դուրս ձգելով Ալէքսանդրետի ծոցը Ալէքսանդրետ նաւահանգստով, որ պիտի անցնէ Ֆրանսային: Նուպար փաշան այս մասին Դէլկասէին տուել է առանձին յուշագիր, որի մէջ, Ֆրանսացիների ինքնասիրութիւնը խնայած լինելու համար, յայտնում է այն միտքը, թէ Ֆրանսան, ամբողջ Կիլիկիան ստանալուց յետոյ, կարող է վերոյիշեալ մասը սեփական նախաձեռնութեամբ զիջել հայերին: Այդ յուշագրի մէջ առաջարկւում է, ի միջի այլոց, ստեղծել առանձին ինքնավար Քիւրդիստան, մէկ կամ մատնանշուած բոլոր երեք պետութիւնների հովանաւորութեան տակ: Ձեր թիւ 2307 հեռագիրը աչքի առաջ ունենալով՝ ես շարունակում եմ խիստ ձեռնպահ մնալ Զաւրիեւին ու Նուպար փաշայի բաղձանքներին որեւէ աջակցութիւն ցոյց տալուց: Եթէ պատահի, իրօք որ, այստեղ տրամադրութիւն նկատուի ընդունելու վերեւ ներկայացուած ծրագիրը, այդ դէպքի համար հաճեցէք իմացրնել ինձ, թէ ի՞նչ չափով վայելում է նա մեր համակրանքը»· (137–38):

Այս հեռագրին Սազոնովը պատասխանում է 3–16 Յունիսին՝ պատճէնը ուղարկելով եւ Լոնտոնի դեսպան Բինկենտորֆին·

«Ձեր թիւ 377 հեռագիրը ստացուած է: Կիլիկիան Ռուսաստանի, Ֆրանսայի եւ Անգլիայի երբեակ հովանաւորութեան տակ դրուելիք հնարաւոր ինքնավար Հայաստանի սահմաններից դուրս ձգելը եղել է հետեւանք այն բանի, որ մենք կամեցել ենք բարեացակամ վերաբերում ցոյց տալ դէպի Ֆրանսայի տրամադրութիւնները այս հողամասի նկատմամբ: Բայց եթէ հայ պատուիրակներին յաջողուի համոզել Փարիզի կառավարութիւնը՝ Կիլիկիան եւս մտցնելու ապագայ ինքնավար Հայաստանի շրջանի մէջ, կայսերական կառավարութիւնը միայն համակրել կարող է իր մշտական հովանաւորութիւնը վայելող թիւրքահայերի բաղձանքների իրագործման»· (138):

* * *

Մի ամիս անց, Սազոնովը Լոնտոնի դեսպան Բինկենտորֆից ստանում է հետեւեալ հեռագիրը — թիւ 462·

«Ինձ այցելեց Նուպար փաշան: Նա ասաց ինձ, որ Փարիզ ու Լոնտոն է ճամբորդել իբրեւ վստահելի անձը կաթողիկոսի, որի ծրագիրը ընդունուած է կայսերական կառավարութիւնից: Այդ ծրագիրն է, ինքնավարութիւնը վեց վիլայէթների եւ Կիլիկիայի՝ չէզոքացուած երեք պետութիւնների հովանաւորութեան տակ: Նա ասաց ինձ, որ այդ ծրագիրը համապատասխանում է Ռուսաստանի տնտեսական ու բարոյական շահերին, ինչպէս եւ Ֆրանսայի եւ Անգլիայի բարեհաճ ուշադրութեան (ce programme serait conforme aux inte'rets economiques et moraux de la Russie, ainsi qu'a la bienveillante attention de la France), որովհետեւ թիւրքական կայսրութեան անդամահատումը դարձել է անխուսափելի: Նա ասաց ինձ, որ Դէլկասէի խնդրանքով ինքը խոստացել է ներկայացնել նրան մի յուշագիր: Այլ եւ Նիկոլսրնի խնդրանքով էլ (մարգարեական անուշ փոփոխութիւններով յուշագիր է ներկայացրել նրան: Իմ տրամադրութեան տակ կը դնէ նրա պատճէնը: Նա կարծում է, որ իր ճամբորդութիւնը Փարիզ անհետեւանք չի անցել եւ ազդեցութիւն է ունեցել Ֆրանսական կառավարութեան վրայ, որովհետեւ Ֆրանսան մինչեւ իր գալը հետամուտ էր լինում Կիլիկիային: Ինքն աշխատել է եւ, ինչպէս կարծում է, ոչ առանց յաջողութեան, որ նման քաղաքականութիւնը կործանարար է Ֆրանսայի շահերի եւ նրա ապագայ յարաբերութիւնների համար Ռուսաստանի եւ Անգլիայի հետ: Զիմանալով ստոյգ կայսերական կառավարութեան տեսակէտները՝ ես սահմանափակուեցի բացառապէս հաւաստիացումներով, թէ Ռուսաստանը ի՞նչ կարեւորութիւն է տալիս հայկական հարցին եւ այն կենդանի հետաքրքրութեան մասին, որ այդ հարցը առաջ է բերում»· (138–3a):

Այս հեռագրից պարզ երեւում է, ուրեմն, որ հայկական պատուիրակութեան նախագա-